ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մարտունի, Շահումյան 2,
Հեռ. 060-74-34-01

N 434

04 հուլիսի 2019 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Սանոսյան.*

Ձեզ ենք ներկայացնում Մարտունի համայնքի ավագանու 28.06.2019թ. նիստի արձանագրությունը և որոշումները:

Առդիր՝ 8 թերթ:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատարող՝
Հ.Մնացականյան

# *ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ - 7*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28-Ը ՀՈՒՆԻՍԻ 2019Թ. ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ:*

*Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու 13 անդամներից 11-ը՝* ՎԱՐԴԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ԱՐՏԱԿ ԳԱԼՍՏՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԴԱՎԹՅԱՆ, ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ, ՍԵՐԳՈ ԵՂՈՅԱՆ, ԱՐՏԱԿ ՋԻՐՈՅԱՆ, ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԱՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ, ԱՐՄԵՆ ՄՈՍՈՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյանը*

*Քարտուղարությամբ՝ Գ. Ոսկանյանի*

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՀԱՐՑ-62. ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 13/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱԲԵՌՆՄԱՆ ԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-63. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-64. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 05-003-1084-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 50,0 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-65.ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 39 ՀԱՍՑԵԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 37 ՀԱՍՑԵՈՒՄ, ԱՀԱՐՈՆ ԱԴԻԼԽԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԵՆՔԻՑ 1,5 ՄԵՏՐ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ԽԱՆՈՒԹ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ «ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-ԻՆ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 64-ՐԴ ՀԱՐՑԸ ՀԱՆՎԵՑԻՆ ՕՐԱԿԱՐԳԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԼՆԵԼՈՎ

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը՝

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ԳԱԼՍՏՅԱՆ

Ռ.ԴԱՎԹՅԱՆ

Վ.ԴԱՎԹՅԱՆ

Ս.ԵՂՈՅԱՆ

Ա.ԶԻՐՈՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Ա.ՄՈՍԱՅԱՆ

Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## *ՈՐՈՇՈՒՄ N 62*

*«28»-ը հունիսի 2019թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 13/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱԲԵՌՆՄԱՆ ԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Մարտունի քաղաքի Կամոյի փողոց 2-րդ նրբանցք թիվ 13/1 հասցեի էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության 0,5 հա հողամասը անհատույց օգտագործման իրավունքով փոխաբեռնման կայան կառուցելու նպատակով հատկացնել «Կոտայքի և Գեղարքունիքի կենցաղային կոշտ թափոնների կառավարում» ՍՊԸ-ին:

2.Տարածքը անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել 20 տարի ժամկետով մինչև 2039 թ. հուլիսի 1-ը:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ
Ռ.ԴԱՎԹՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Մ.ԵՂՈՅԱՆ
Ա.ՋԻՐՈՅԱՆ
Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Ա.ՄՈՍՍՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 63*

*«28 »-ը հունիսի 2019թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով.***

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Մարտունի համայնքի 2019թ. բյուջեի վարչական մասի եկամուտները՝ «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի հոդվածով ավելացնել 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամով:

2. Մարտունի համայնքի 2019թ. բյուջեի վարչական մասի ծախսերը ավելացնել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 4111 հոդված՝ 1200000(մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամով և 4267 հոդված՝ 300000(երեք հարյուր հազար) ՀՀ դրամով:

3.Մարտունի համայնքի 2019թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի նախահաշվի 4891 հոդվածից 759900 (յոթ հարյուր հիսունինը հազար ինը հարյուր) դրամ տեղափոխել «Մարտունու Սմբատ Միերյանի անվան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի նախահաշվի 4511 հոդված՝ բռնցքամարտի միջազգային մրցաշարին մասնակցելու համար:

4.Մարտունի համայնքի 2019թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 127000(մեկ հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամ տեղափոխել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 4239 հոդված՝«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում, Մարտունի քաղաքի գերեզմանոցի բարեկարգման և երկաթյա ճաղավանդակների նեկման համար:

5.Մարտունի համայնքի 2019թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 140000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ տեղափոխել՝«Աղբահանություն

և սանիտարական մաքրում» նախահաշվի 4213 հոդված «Կամազ» մակնիշի ավտոմեքենայի համար լոկատոր գնելու նպատակով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

| | |
|---|---|
| Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆ |
| Ա.ԳԱԼՍՏՅԱՆ | Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ |
| Ռ.ԴԱՎԹՅԱՆ | Ա.ՄԵԼԻՔՅԱՆ |
| Վ.ԴԱՎԹՅԱՆ | Ա.ՄՈՍՍԱՅԱՆ |
| Ս.ԵՂՈՅԱՆ | Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ |
| Ա.ՋԻՐՈՅԱՆ | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 64*

*«28»-ը հունիսի 2019թ.* *ք. Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 05-003-1084-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 50,0 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Համաձայնություն տալ Մարտունի համայնքի 05-003-1084-0001 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերի գործառնական նշանակության 50,0 հա հողամասը մրցութային կարգով որպես արոտավայր օգտագործելու նպատակով հատկացնել վարձակալության:
2. Տարածքը վարձակալության հատկացնել 3 տարի ժամկետով:
3. Մրցույթի մեկնարկային գինը 50,0 հա հողամասի համար սահմանել 100000(մեկ հարյուր հազար) դրամ տարեկան:
4. Մրցույթի քայլի չափ սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

Հավելված 1
Մարտունի համայնքի ավագանու
28-ը հունիսի 2019թ. թիվ 64 որոշման

| 2/2 | Հասցե | Ծածկագիր | Հատկացման նպատակը | Գործ. նշանակությունը | Մակ. հա | Լոտի մեկնարկային գինը /դրամ/ | Նախավճար 5% | Լոտի համարը | Հողամասի նկատմամբ սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 103 | Ք.Մարտունի գյուղատնտեսական | 05-003-1084-0001 | Գյուղ.գործունեություն | արոտավայր | 50,0 | 100000 | 5000 | 1 | չկան |

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝9, դեմ՝ 1, ձեռնպահ՝1

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

ԿՈՂՄ՝Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ԳԱԼՍՏՅԱՆ

Ռ.ԴԱՎԹՅԱՆ

Վ.ԴԱՎԹՅԱՆ

Ս.ԵՂՈՅԱՆ

Ա.ՋԻՐՈՅԱՆ

Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա.ՄՈՍԱՅԱՆ

ՁԵՌՆՊԱՀ՝ Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

ԴԵՄ՝ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 65*

*«28 »-ը հունիսի 2019թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 39 ՀԱՍՑԵԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 37 ՀԱՍՑԵՈՒՄ, ԱՀԱՐՈՆ ԱԴԻԼԽԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԵՆՔԻՑ 1,5 ՄԵՏՐ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ԽԱՆՈՒԹ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 22 օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

Համաձայնություն տալ Ահարոն Աղիլխանյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող ք. Մարտունի Մյասնիկյան փողոց թիվ 37 հասցեում գտնվող հողամասի վրա մանկապատանեկան կենտրոնի շենքից 1,5 մետր հեռավորությամբ կառուցել երկհարկանի խանութ:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 2, ձեռնպահ՝0

ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ ՉՄԱՍՆԱԿՑԵՑ ՀԱՐՑԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

ԿՈՂՄ՝Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ՋԻՐՈՅԱՆ
Ռ.ԴԱՎԹՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա.ՄՈՍԱՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
ԴԵՄ՝ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ